

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ ՓԲԸ»



1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում	8
1.3. Ջրահեռացման համակարգ	8
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	9
1.5. Էներգահամակարգ	10
1.6. Մեքենա-մեխանիզմներ	11
2. Առևտրային տնօրինություններ	12
2.1. Բաժանորդների տվյալներ	13
2.2. Հասույթ	13
2.3. Գանձում	16
2.4. Դեբիտորական պարտքեր	17
2.5. Ջրաչափեր	18
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	19
3. Տեխնիկական տնօրինություն	20
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	21
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	22
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	24
3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ	24
3.5. Ջրատար համակարգի բարելավում	25
4. Լրատվական ծառայություն	27
5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն	29
5.1. Փաստաթղթերի մշակում	30
5.2. Դասընթացներ /սեմինարներ	30
5.3. Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ-2019	31
5.4. Համագործակցություն ՀՀ ԱԻ և ՊՆ նախարարությունների հետ	32
5.5. Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի ապահովում	33
5.6. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	33

ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



1.1 ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ինչպես նաև ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

Քաղաք Երևան

● Արաբկիր տեղամասում՝ Սևաստոպոլյան 8 հասցեում խցափակումով շահագործումից հանվել է $D=50$ մմ, $L=10$ մ պողպատե վթարված ջրագիծ: Աշխատանքների արդյունքում խնայվել է $Q=0.5$ լ/վ ջրաքանակ:



Սևաստոպոլյան փողոցի ջրամատակարարման սխեման


● Արաբկիր տեղամասում՝ Կոմիտաս 63 հասցեում խցափակումով շահագործումից հանվել է $D=50$ մմ, $L=15$ մ պողպատե քայքայված ջրագիծ: Աշխատանքների արդյունքում խնայվել է $Q=0.2$ լ/վ ջրաքանակ:



Կոմիտաս փողոցի ջրամատակարարման սխեման

Քաղաք Ստեփանավան

● Գյուղ Վարդաբլուրում՝ 4-րդ փողոցում, կառուցվել է $D=32$ մմ, $L=35$ մ ջրագիծ: Աշխատանքների արդյունքում խնայվել է $Q=0.6$ լ/վ ջրաքանակ և շահագործումից հանվել է $D=40$ մմ, $L=35$ մ պողպատե քայքայված ջրագիծ:



Վարդաբլուր 4-րդ փողոցի ջրամատակարարման սխեման

Քաղաք Սպիտակ




● Սպիտակ տեղամասում՝ Այգեստան 1/3 հասցեում, $D=100$ մմ, $L=30$ մ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է $D=90$ մմ, $L=30$ մ պոլիէթիլեն խողովակով: Աշխատանքների արդյունքում խնայվել է $Q=0.7$ լ/վ ջրաքանակ և վերացել են ցածր ճնշում ունենալու բողբոքները:

Սպիտակ քաղաքի Այգեստան թաղամասի ջրամատակարարման սխեման

Քաղաք Ապարան

● Ապարան տեղամասում՝ Գ.Լուսավորիչ փողոցից դեպի Գրիբոյեդով փողոց գնացող $D=50$ մ, $L=200$ մ քայքայված և աննպատակային ջրագիծը, հանվել է շահագործումից, ինչի արդյունքում վերացել են հնարավոր ապօրինությունները և խնայվել է $Q=0.3$ լ/վ ջրաքանակ:



Ապարան քաղաքի ջրամատակարարման սխեման

Քաղաք Աբովյան



Աբովյան 28-շենքի կոյուղագծերի սխեման

● Աբովյան տեղամասի 3-րդ միկրոշրջանի 28-շենքի վթարված կոյուղագիծը փոխարինվել է $D=250$ մ, $L=6$ մ պոլիէթիլեն խողովակով: Աշխատանքների արդյունքում վերացել են բնակիչների բողոքները կապված գարշահոտության և անընդհատ խցանվող կոյուղու հետ:

● Աբովյան տեղամասի՝ Նուռնու կայարանի հարևանությամբ, փոխարինվել է $D=100$ մ, $L=50$ մ պողպատե քայքայված ջրագիծը $D=63$ մ, $L=50$ մ պոլիէթիլեն խողովակով: Աշխատանքների արդյունքում խնայվել է $Q=0.5$ լ/վ ջրաքանակ:



Նուռնու կայարանի հատվածի ջրամատակարարման սխեման

Քաղաք Ալավերդի



Այգեհատ գյուղի ջրամատակարարման սխեման

● Ալավերդի տեղամասի գյուղ Այգեհատում կառուցվել է $D=50$ մ, $L=100$ մ պոլիէթիլեն ջրագիծ: Աշխատանքների արդյունքում բարելավվել է ջրամատակարարումը և խնայվել է $Q=0.3$ լ/վ ջրաքանակ:

Քաղաք Այրում

● Այրում քաղաքի՝ Աբովյան փողոցում, կառուցվել է $D=150$ մ, $L=24$ մ պոլիէթիլենե կոյուղագիծ: Աշխատանքների արդյունքում վերացել է բնակիչների բողոքները կապված գարշահոտության և անընդհատ խցանվող կոյուղու հետ:



Այրում քաղաքի Աբովյան փողոցի կոյուղագծերի սխեման

Քաղաք Թալին



Թալին քաղաքի Թամանցիներ փողոցի ջրամատակարարման սխեման

● Թալին տեղամասում՝ Թամանցիների փողոցում, կառուցվել են $D=60$ մ, $L=200$ մ և $D=75$ մ, $L=400$ մ պոլիէթիլենե խողովակներ: Աշխատանքների արդյունքում խնայվել է $Q=2-3$ լ/վ ջրաքանակ և շահագործումից հանվել է վթարային $D=150$ մ, $L=600$ մ պոլիէթիլենե խողովակ:

Սեպտմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են ստորև ներկայացված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1,417
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	36,086
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	20,375
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	4,415
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	39
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4,663.2
Կառուցված ջրագիծ	մ	2,517.7
Կառուցված կոյուղագիծ	մ	352
Վերացված գաղտնի վթարներ	հատ	23
Փոխարինված փական	հատ	300
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույն	հատ	596
Մաքրված դիտահոր	հատ	2
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	14.1
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	1,957
Ջրահեռացման ցանցում	հատ	3,993
Պոմպակայաններում	հատ	70
Մաքրված անձրևընդունիչ	հատ	618

Սեպտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2՝ Վերացված վթարների հակիրճ նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	655	1082	432

1.2. ԶՐԱԶԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է սեպտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3՝ Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	215	32	2	0	0	2	0	0	1	252
Փոխարինված	76	17	3	0	2	2	1	1	1	103
Տեղափոխված	52	9	1	0	0	1	1	1	0	65
Տեխ. Ակտ	188	42	2	3	2	4	0	0	0	241
Ընդամենը	531	100	8	3	4	9	2	2	2	661

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 661 ջրաչափ: Կատարված աշխատանքների 80,33 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ԶՐԱՅԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սեպտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4՝ Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում հատ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1860	272	14
2	Մաշտոց	1310	216	0
3	Շահումյան	2190	183	0
4	Զեյթուն	390	126	6
5	Շիրակ	545	462	53
6	Ալավերդի	1760	9	0
7	Ապարան	30	23	0
8	Արթիկ	0	83	18
9	Աշոցք	0	7	31
10	Բերդ	35	11	20
11	Իջևան	797	37	13
12	Լոռի	2850	180	0
13	Նոյեմբերյան	130	17	8
14	Սպիտակ	0	9	0
15	Ստեփանավան	0	21	0
16	Թալին	0	21	0
17	Տաշիր	165	7	2
18	Էջմիածին	0	152	2
19	Չարենցավան	1710	76	0
20	Արովյան	2863	86	6

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում հատ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում զժ/մ
21	Հրազդան	2050	108	46
22	Աշտարակ	2675	9	0
23	Կենտրոն	110	207	4
24	Հյուսիս	250	273	24
25	Հարավ	0	319	6
26	Էրեբունի	220	172	31
27	Արմավիր	0	101	0
28	Արտաշատ	0	50	18
29	Արարատ	305	60	0
30	Մասիս	0	48	0
31	Գավառ	265	46	0
32	Սևան	0	91	347.6
33	Մարտունի	0	19	12
34	Վարդենիս	0	12	0
35	Ճամբարակ	0	15	0
36	Դիլիջան	0	46	44
37	Վայք	570	14	0
38	Եղեգնաձոր	20	7	0
39	Զերմուկ	0	29	0
40	Սիսիան	0	90	41
41	Գորիս	0	22	0
42	Կապան	0	75	12
43	Մեղրի	0	28	0
	Ընդամենը	23100	3839	745.6

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

- Սևանի թիվ 3 կոյուղու պոմպակայանում կեղտաջրերի մաքրման կայանում վթարվել էր մանր ճաղավանդակի ռեդուկտորը, ինչի հետևանքով առկա էր յուղի արտահոսք: Աշխատակիցների կողմից փոխարինվել են խծուծները, կարգաբերվել են մանր ճաղավանդակի քերիչ սանրերը, ստուգվել են բոլոր սարքավորումները և արդյունքում ԿՄԿ-ն աշխատում է անխափան:
- Մարտունի կեղտաջրերի մաքրման կայանում իրականացվել է արտադրական մասնաշենքի վթարված էլեկտրական դարպասի վերանորոգում, ինչի արդյունքում տիղմի կոնտեյնների աշխատանքը կարգավորվել է:
- Վարդենիսի կոյուղու մաքրման կայանում ամպրոպների և կայծակի հետևանքով վթարվել էր էլեկտրական ենթակայանը: Ուսումնասիրման արդյունքում պարզ է դարձել, որ բարձրավոլտ ապահովիչները այրվել են: Խնդրի կարգավորման համար ապահովիչները փոխարինվել են նորերով, կատարվել է սարքավորումների զննում, մանր ճաղավանդակի քերիչ սանրերի կարգաբերում:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Ստորև աղյուսակ 5-ում ներկայացված են մանրամասները.

Աղյուսակ 5՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	65,596	27
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	76,989	28,8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	122,818	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	143,746	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	105,626	9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	16,418	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	11,564	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	21,400	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	8000	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	6,190	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՅԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6՝ Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակը ըստ աշխատանքի նկարագրի
պոմպի աշխատանքի գնում կարգավորում	83
էլ. սարքերի գնում կարգավորում	19
աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից,	0
առանցքակալի տեղադրում, բանոդ անվի փոխարինում,	
վերանորոգման հավաքածուի տեղադրում	
վերանորոգման հավաքածուի տեղադրում	4
ավտոմատիկայի կառավարիչ	2
լիսեռի տեղադրում	2
առանցքակալի տեղադրում	11
փականի տեղադրում	4
բաքի միացման դետալներ	1
աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից	9
լիսեռի փոխարինում	1
բանոդ անվի փոխարինում	2
շարժիչի վերանորոգում	2
Ֆազի բացակայության ռելե	1
բարձր ճնշման ռելեի փոխարինում	3
խցուկի տեղադրում	2
թողարկիչի տեղադրում	4
պոմպի տեղադրում	2
մեմբրանի տեղադրում	1
ցածր ճնշման ռելեի փոխարինում	5
էլ. հոսանքի լարերի նորոգում	4
էլ. ավտոմատ անջատիչի կարգավորում	1
Ընդամենը	163

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Մեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Արևելք» ՍՍ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար սեպտեմբեր ամսվա ընթացքում նորոգվել են թվով 4 մեքենաների շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 4 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճուպանները:

Առջևի համակարգի նորոգում է կատարվել թվով 2 մեքենաների վրա, փոխարինվել են գնդավորներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ:



Հետևի համակարգի նորոգումներ են կատարվել թվով 2 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսասոսնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 3 մեքենաների վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 6 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 13 անվաղողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Փոխարինվել են թվով 38 մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, անտիֆրիզ և գտիչներ:

Թվով 5 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորերով:

Նորոգվել է թվով 4 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 6 մեքենամեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսասոսնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 9 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 7 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման մղիչներ և ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 3 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուլի լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ:

Թվով 7 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏԿՅԱԼՆԵՐ

Մ.թ. ապրիլից կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ՄՏՍՏ սպասարկման տարածքներից Աբովյան, Էջմիածին, Մասիս և Ապարան տեղամասերը դարձան ԵՏՍՏ սպասարկման տարածքներ մոտ 65,000 բաժանորդներով:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյուսավետ կազմակերպման համար ԵՏՍՏ-ում ներգրավվել են 259, իսկ ՄՏՍՏ-ում՝ 59 պայմանագրային աշխատակից: 01.10.2019 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՏ-ում՝ 322,615, իսկ ՄՏՍՏ-ում՝ 169,892 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները սեպտեմբեր ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2018թ. հունվար-2019թ. սեպտեմբեր ամիսների ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	427,340	309,884	72,5
		Իրավաբանական անձ	19,965	12,731	63,8
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	198,144	163,432	82,4
		Իրավաբանական անձ	8,188	6,360	77,7
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	625,484	473,316	75,67
		Իրավաբանական անձ	28,153	19,091	67,81

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները սեպտեմբեր ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	462,637	356,925	77,2
		Իրավաբանական անձ	23,137	16,199	70,0
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	253,260	198,144	78,2
		Իրավաբանական անձ	9,917	8,188	82,6
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	715,897	555,069	77,53
		Իրավաբանական անձ	33,054	24,387	73,78

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն):

ԵՏՍՏ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 393 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՏ սպասարկման տարածքում՝ 153 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՏ-ի «Շենգավիթ», «Հյուսիս», «Շահումյան» և ՄՏՍՏ-ի «Լոռի», «Շիրակ» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:


Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Սեպտեմբեր ամսվա ընթացքում ԵՏՍՏ-ում ստուգաչափվել է 2,925, իսկ ՄՏՍՏ-ում՝ 426 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 06.2019
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	1,968	647	113	2,728
		Իրավաբանական անձ	111	82	4	197
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	188	148	31	367
		Իրավաբանական անձ	26	30	3	59
	Ընդամենը		2,293	907	151	3,351

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել 93,465 մ³ վերահաշվարկված հասույթ (65.84 % Երևան և 34.16 %՝ մարզեր):

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2019թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)




Սեպտեմբերին ընկերության առևտրային տնօրինությունների կողմից ձևավորված հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև աղյուսակի տեսքով.


Տարածաշրջան	Առաջադրանք հազ.մ ³	Փաստացի հազ.մ ³	Տարբերություն %, հազ.մ ³
Երևան Մարզեր	9,028	9,087	0.65
Ընդամենը	3,468	3,242	-6,5
Ընդամենը	12,496	12,329	-1,34

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



2.3. ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Սեպտեմբեր ամսին գանձումը ԵՏՍՍ-ում կազմել է 1,567,115 մլն դրամ, իսկ ՄՏՍՍ-ում՝ 494,280 մլն դրամ:

Նախորդ ամսվա ձևավորած հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

ՄՏՍՍ կոնտրոնական գրասենյակի աշխատակիցների կողմից հեռախոսազանգերի միջոցով հիշեցվում են բաժանորդներին թերի վճարումների և առկա դեբիտորական պարտքերի վերաբերյալ: Սեպտեմբեր ամսվա ընթացքում հեռախոսազանգերի արդյունքերը.

Ամիս	Ձանգերի քանակը	Դեբիտորական պարտքը /հազ. դրամ	Վճարումներ կատարած բաժանորդներ		Վճարում գումար /հազ. դրամ	
			քանակ	%		%
Հունիս 2019	2,522	28,754	1,493	59	8,051	28
Հուլիս 2019	2,190	48,808	1,230	56	6,770	14
Օգոստոս 2019	2,689	54,139	1,698	63	8,011	15
Սեպտեմբեր 2019	2,884	60,132	1,922	67	12,011	20

Ընկերության ձևավորած հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Երևան	Առաջադրանք/մլն դրամ	1,111,564	1,068,993	1,023,278	1,136,162	1,200,614	1,250,688
	Հավաքագրում/մլն դրամ	961,127	1,066,773	1,207,447	1,265,886	1,383,789	1,278,933
	%	86	100	118	111	115	102
Մարզեր	Առաջադրանք/մլն դրամ	485,310	528,579	519,889	519,889	459,526	529,347
	Հավաքագրում/մլն դրամ	394,761	428,304	489,054	446,494	435,710	416,331
	%	81	81	94%	86	95	79
Ընդամենը	Առաջադրանք/մլն դրամ	1,596,874	1,597,572	1,543,167	1,656,051	1,660,140	1,780,035
	Հավաքագրում/մլն դրամ	1,355,888	1,495,077	1,696,502	1,712,379	1,819,499	1,695,264
	%	85.0	93.6	109.9	103.4	19.6	95.2

Տարածաշրջան	Գանձում	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր
Երևան	Առաջադրանք/մլն դրամ	1,421,559	1,554,117	1,611,800
	Հավաքագրում/մլն դրամ	1,426,645	1,518,552	1,567,115
	%	100	97	97.23
Մարզեր	Առաջադրանք/մլն դրամ	529,647	561,116	613,108
	Հավաքագրում/մլն դրամ	511,692	499,129	494,280
	%	97	89	81.0
Ընդամենը	Առաջադրանք/մլն դրամ	1,780,035	2,115,233	2,224,908
	Հավաքագրում/մլն դրամ	1,695,264	2,017,681	2,061,395
	%	95.2	95.4	92.60

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Սեպտեմբեր ամսվա ընթացքում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 107 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 10.18 մլն դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 78 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 6.8 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2019 թ. մարտը ներառյալ		Բավարարված		Մերժված		2017-2019 թթ. ընթացիկ գործեր		2017-2019 թթ. ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
5,067	600,841,524	3,710	421,207,239	111	8,976,177	6,157	698,850,520	1,956	151,147,656

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 73,2 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 3,0 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (վոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.


Տարածաշրջան	Պարտքը 01.10.2019թ. դրությամբ (մլն. դրամ)	Այդ թվում սեպտեմբեր ամսվա հասույթ (մլն. դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	4,190.1	1,587.5
Բնակիչ-բաժանորդներ	2,908.2	1,039.1
Իրավաբանական անձեր	1,281.9	548.4
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1,891.0	542.6
Բնակիչ-բաժանորդներ	1,451.3	403.3
Իրավաբանական անձեր	439.7	139.3
Ընդամենը, այդ թվում	6081.1	2130.1
Բնակիչ-բաժանորդներ	4359.5	1442.4
Իրավաբանական անձեր	1721.6	687.7

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:


ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 243.6 մլն դրամը կուտակվել է երեք բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը, «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը և Կոնդի Առանձնատների Տնտեսություն ՊՈԱԿ-ը:

ՄՏՍՏ մասով հանրապետական բյուջեի պարտքը 01.10.2019թ. դրությամբ կազմում է մոտ 103.0 մլն դրամ (Պաշտպանության նախարարություն, ՔԿՀ և այլն), որը կվճարվի առաջիկայում:

2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Երևան)



2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.10.2019 թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	448,342	355,567	79.3	22,451	16,190	72.11
	Առանց ջրաչափի	14,296	1,358	9.5	686	9	1.3
Մարզեր	Ջրաչափով	231,969	170,730	73.60	9,563	7,027	73.48
	Առանց ջրաչափի	21,912	1,377	6.28	244	4	1.64
Ընդամենը	Ջրաչափով	680,311	526,297	77.36	32,014	23,217	72.52
	Առանց ջրաչափի	36,208	2,735	7.55	930	13	1.40

Տվյալների բազայում 01.10.2019թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	586,962	291,891	49.7	25,403	5,820	22.9
Մարզեր	265,609	70,299	26.47	10,868	1,877	17.27
Ընդամենը	852,571	362,190	42.48	36,271	7,697	21.22

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4,190, իսկ մարզերում՝ 876 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 113, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 330 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափների ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափների քանակ	%
գ.Քասախ	2235	1778	79.5
գ.Պռոշյան	1527	972	63.3
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5207	1395	26.8

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Մեպտեմբեր ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքները շարունակվել են Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 5,804, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3,424, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 539, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 833, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 456, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 436 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 636 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՍԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրազրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	126	80,982	11,770,711
Մարզեր	89	28,148	4,658,714
Ընդամենը	215	109,130	16,429,425

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի սեպտեմբեր ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.4 %, ինչը 0,2 %-ով ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի շրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Շրամատակարարման շարունակականություն




Հաշվետու ամսվա ընթացքում շահագործման տարածաշրջանների տնօրինություններում թվով 40 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լրգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 13-ը անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից:

Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լրգերների գրաֆիկները:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 93,99 կՎտ/ժ. (2%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության փրոցոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 60 հասցե, և թերություններ չեն հայտնաբերվել:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսն նվազել է 4490,2 կՎտ/ժ կամ 18 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ. էներգիայի ծախսը ավելացել է 7,236 կՎտ/ժ կամ 28,6 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ




● Սեպտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 41,230 կՎտ/ժամ կամ 2,54 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 205,653 կՎտ/ժամ կամ 8,0 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 174,881 կՎտ/ժ կամ 3,36 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեդլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա




3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են սեպտեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.


Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	309
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	28
Նոր կետերի ավելացում՝ ֆիզիկական բաժանորդներ	հատ	180
Նոր կետերի ավելացում՝ իրավաբանական բաժանորդներ	հատ	30
Մոդելավորման աշխատանքներ (փորձնական ընտրվել է Արաբկիրը)	հատ	1
ԱՅ ձևաչափով քարտեզների տպում և տրամադրում	հատ	7
Վթարային ջրանջատուժներ (համայնքների քանակ)	հատ	1
Պլանային ջրանջատուժներ (համայնքների քանակ)	հատ	3
ՀՀ սեփական, բազմաբնակարանային և իրավաբանական բաժանորդների խմբավորման և լրացման աշխատանքներ (ըստ սպասարկման տարածքի, լոգերի և լոգեր գոտիների, ժամային գրաֆիկի), ֆիզիկական բաժանորդների տվյալների մշակում և մուտքագրում բազա	հատ	136,572
Կոյուղագծերի փոփոխություններ ԱՏՀ համակարգով	մետր	2,235
Երևան քաղաքի կոյուղագծերի թվայնացում	մետր	149,144
Կոյուղու դիտահորերի թվայնացում	հատ	127

3.4. ԿԱՐԳԱՎԱՐՄԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ամսվա ընթացքում խողովակի ներքին ուսուժանասիրման տեսախցիկով ուսուժանասիրվել է Իջևան տեղամասի Ազատամուտի խորքային հորը: Ուսուժանասիրության արդյունքում պարզվել է խորքային հորի ջրի հորիզոնը և հորի խորությունը (50մ): Վերոնշյալ տեղեկատվության հիման վրա խորքային հորի համար ընտրվել է համապատասխան տվյալներով պոմպ: Հաշվետու ամսվա ընթացքում կորուստների հայտնաբերման նպատակով SebaKMT UDM-200 տիպի հոսքաչափերով ուսուժանասիրություններ են կատարվել Մպիտակ տեղամասի՝ Շիրակամուտի խորքային հորերից սնվող ջրատարի Տոխոլաշենի ուղղության վրա: Ուսուժանասիրվել են նշված ուղղության՝ գլխամասային հոսքաչափից մինչև կառավարման հանգույց և կառավարման հանգույցից սկիզբ առնող երկու գոտիների ջրաբանակները:



Ստորև ներկայացված է ջրաչափերի գրանցած արդյունքների գրաֆիկական պատկերը.



3.5. ԶՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Սեպտեմբեր ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Ուսումնասիրվել են Եղեգնաձոր քաղաքը սնող «40 աղբյուրներ» կապտածները և ջրատարը: Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ կապտածներում սանիտարական գոտին բացակայում է, իսկ կապտածները գտնվում են անմխիթար վիճակում: Կապտածներից արտահոսքը կազմում է 15-20լ/վ: Զրատարը գտնվում է բավարար վիճակում:



Արզնի



● Գազի հորերի տարածքում սողանքային իրավիճակների պատճառով ջրատարների վրա (Արզնի 1, Արզնի 2) առաջացել են դեֆորմացիաներ և հոսակորուստներ.

Կաթնաղբյուր

● Արամուսի խորքային հորերից մինչև Կաթնաղբյուր 3 ջրատար ջերմոցի տարածքում, պոլիէթիլենային ջրագիծը շինարարական աշխատանքների կատարման ընթացքում զնառվել է շինարարի կողմից, ով իր միջոցներով փոխհատուցել է պատճառված վնասը.



Գառնի-Խարբերդ ջրատար

● Գառնի-Խարբերդ ջրատարի շրջայցի ընթացքում Գառնի-Մսի կոմբինատ ՕԿՁ ջրատարի վրա հայտնաբերվել է վթար, որը կազմում էր 5լ/վ:



- Գառնի-Խարբերդ ՕԿՋ-ի վրա ևս հայտնաբերվել է վթար՝ դարձյալ 5լ/վ: Դրանք վերացվել են Հարավ տեղամասի ուժերով.



Արզական-Խարբերդ

- Արզական-Խարբերդ ջրատարի վրա նախատեսված կանգառի ժամանակ, որի ընթացքում Հյուսիս-Հարավ ավտոճանապարհի շինարարական աշխատանքների շրջանակներում պետք է շրջանցվեին Արարատյան 4 և Արարատյան 5 ջրատարները, որոշվել է տեղադրել նոր «Взлет» տիպի հոսքաչափ թռչնանոցի առաջ, որը բաժանարար չափման կետ է Արևելք և Արևմուտք ՇՏ-ների միջև: Հոսքաչափի տեղադրման համար հարկավոր էր դատարկել ջրատարը: Այդ նպատակով անհրաժեշտ եղավ վերագործարկել թռչնանոցում գտնվող ջրթող փականը, որը չի գործարկվել կառուցման օրից ի վեր:



ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ




Սեպտեմբերին, Վեոլիա Ջուր ՓԲԸ գլխավոր տնօրենի փոփոխության հետ կապված, որոշակիորեն փոխվեց նաև Հանրային կապերի բաժնի աշխատանքը:

Հասկանալի պատճառներով առաջացավ որոշակի պաուզա, որի նպատակը 2019թ. ընթացքում Օպերատորի գործունեության ու արդյունքների վերաիմաստավորման անհրաժեշտությունն էր, հետագա առաջընթացի, առաջնահերթությունների որոշումը, որոնց կատարմանը և պետք է ուղղվի հետագայում Հանրային կապերի բաժնի աշխատանքը:

Մինչ այդ ամիսը Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի հանրության հետ աշխատանքը համակարգում էր ներգրավված կազմակերպությունը «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամը /Հիմնադրամ/: Սեպտեմբերին ընկերության նոր ղեկավարությունը, չնայած իր ողջ զբաղվածությանը, սկսեց աշխատել նախատեսվող Հասարակական Տեղեկատվական Արշավին /Public Information Campaign/ նոր Խորհրդատու կազմակերպության կամ բարձրորակ մասնագետներ ներգրավելու ուղղությամբ, որի իմաստը վերջին հաշվով հանրության հետ կապերի հետագա զարգացումն էր և Օպերատորի գործարար վարկի բարձրացումը սպառողների շրջանում:

Իսկ մինչ այդ Հանրային կապերի բաժինը շարունակել է իր ամենօրյա գործունեությունը ընթացիկ հարցերը լուծելու, բաժանորդներից ստացվող բողոքները նվազագույնի հասցնելու, ընկերության թվային լրատվամիջոցները /So Me-Social Media/ սպասարկելու և վերջին ամիսների հաջողությունները զարգացնելու համար:

Առավել նշանակալից աշխատանքներից կարելի է առանձնացնել Ջրամատակարարման հերթական գրաֆիկի խմբագրումը և հրապարակումը «Ժողովուրդ» օրաթերթում, որն իրականացվեց ՀՀ ՀՕԿՀ-ի սահմանած կարգի համաձայն:



Այնուհետև «Կենտրոն» հեռուստաալիքի միջոցով օպերատիվորեն պատրաստվեց և եթեր հեռարձակվեց Երևանում խոշոր ջրանջատման պատճառների մասին ռեպորտաժ: Միաժամանակ համապատասխան մամուլի հաղորդագրություն ու լուսանկարներ ուղարկվեցին հիմնական լրատվամիջոցներին ու կառավարման պատկան մարմիններին: Այդ մասին գրվեց նաև ընկերության պաշտոնական կայքում ու Ֆեյսբուքյան էջում:

Հանրային կապերի բաժինը սեպտեմբերին անդրադարձավ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ համակարգում «ՆԿԱՏԵԼ, ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՀՈԳԱԼ» նշանաբանով անցկացված

«Առողջության և Անվտանգության Միջազգային Շաբաթ -2019»-ը ամենամյա միջոցառմանը, որը մաս էր կազմում ողջ Վեոլիա Գրուպում իրականացվող միջոցառման: Մամուլի հաղորդագրությունն այդ մասին լուսանկարներով

հանդերձ նաև տեղադրվեց ընկերության պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

Չորրորդ կարևորագույն աշխատանքը՝ Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղի 3 անչափահաս երեխա ունեցող խիստ կարիքավոր Ասլանյանների ընտանիքի համար ջրագծի կառուցումն էր ընկերության կողմից, որպես բարի կամքի դրսևորում: Այն ոչ միայն լուսաբանվեց մեր So Me-ներով, այլ նաև ցուցադրվեց Արմենիա հեռուստաալիքի «Մուր անկյուն» հաղորդաշարով:

Այս ամենից զատ, մշտական ուղադրության կենտրոնում են եղել Ֆեյսբուքի միջոցով ստացվող սպառողների հարցումները: Դրանք սպասարկվել են փաստորեն 7/24 ռեժիմով, անմիջապես ուղարկվել են ընկերության համապատասխան ստորաբաժանուժներ, իսկ ստացվող պատասխանները խմբագրելուց հետո ներկայացվել են դիմումատուներին:

Ընդհանուր առմամբ ամսվա ընթացքում մեր հրապարակումները ֆեյսբուքում հասանելի են եղել մոտ 32 հազար սպառողի, իսկ այցելուների քանակն ավելացել է մոտ 350-ով: Այս հանգամանքը Հանրային կապերի բաժնից պահանջում է ավելի բարձր պատասխանատվություն և ապացուցում, որ Ֆեյսբուք սոցիալական ցանցը արդեն առաջիկայում կդառնա Օպերատորի թիվ 1 կապի միջոցը հանրության հետ:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



5.1 Փաստաթղթերի մշակում

● Ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 248-րդ հոդվածի 1)-ին և 3)-րդ մասերի պահանջներով, ինչպես նաև ՎԵՈԼԻԱ ԳՐՈՒՂԻ «Գազաէներգետիկայի և գազաբացային աշխատանքների անվտանգություն» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջներով, ՈԱԱ Ծառայությունը մշակեց «Գազաէներգետիկայի և գազակտրաման աշխատանքներին, ինչպես նաև թթվածնի և ացետիլենի բալոնների, գեներատորի պահպանմանը, տեղափոխմանը և պահեստավորմանը ներկայացվող անվտանգության պահանջներ» հրահանգը, որն Ընկերության Գլխավոր Տնօրենի 30/09/2019 թվականի 29Լ հրամանով դրվեց գործողության մեջ:

● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ՕԲԵՆՔ) պահանջներով, Ծառայությունը մեկնարկեց Արտադրական Վտանգավոր Օբյեկտ հանդիսացող Ընկերության հեղուկ քլորով շահագործվող քլորակայանների, ՀՏԿ-ներում տեղադրված ամբարձիչ սարքավորումների (տելիներ, միահեծան ամբարձիչ կոունկներ), ավտոկռանների, քլոր տեղափոխող մեքենաների թվով 116 ԱՎՕ-ի տեխանվտանգության փորձաքննության նախապատրաստական աշխատանքները մշակելով ԱՎՕ-ների տեխանվտանգության փորձաքննության կազմակերպման պլան-ժամանակացույցերը:

● Ղետք է նշել, որ վերթվարկյալ աշխատանքները կմեկնարկեն սույն թվականի հոկտեմբերի 1-ից՝ որոնք ՈԱԱ Ծառայության անմիջական համակարգմամբ կիրականացվեն տեխանվտանգության փորձաքննություն իրականացնելու հավատարմագիր ունեցող անկախ փորձագետների կողմից:

5.2. Դասընթացներ/սեմինարներ


● Հաշվետու ամսվա ընթացքում «Նարեկ» գիտահետազոտական ընկերությունում տեղի ունեցավ ամբարձիչ մեքենայի վարորդի (կոունկավարի), գազավառելիքային սնման համակարգով կահավորված ավտոտրանսպորտային միջոցների վարորդների և կաթսաների և կաթսայական տեղակայանքների սարքվածքի գնման և սարքին վիճակի պատասխանատու անձի մեկական աշխատակցի որակավորման դասընթաց:

● Հիմք ընդունելով «Վեոլիա Գրուպի» գլխավոր գործադիր տնօրեն Արտուրան Ֆրերոյի ուղերձը, ելնելով «Անվտանգության շաբաթ» միջոցառման նպատակներից, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Բարձր ռիսկեր պարունակող գործունեության կառավարման անվտանգության ստանդարտների պահանջներից» սեպտեմբերի 16-ից 20-ն ընկած ժամանակահատվածում «Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ 2019» հինգերորդ միջոցառման շրջանակներում Ընկերության հիդրոտեխնիկական կառուցվածքները շահագործող, սպասարկող ինժեներատեխնիկական անձնակազմերի համար իրականացվեցին աշխատատեղում անվտանգության և առողջության մասով լրացուցիչ հրահանգավորման աշխատանքներ:

● Այս շրջանակներում սույն թվականի սեպտեմբերի 20-ին կազմակերպված «Առողջության և անվտանգության մշակույթը որպես «զրո պատահար» տեսլականի նախապայման» սեմինարին մասնակցեց Ընկերության ղեկավար կազմը և կառուցվածքային ստորաբաժանումների պատասխանատուները թվով 52 մասնակից:




2018-2019թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



* 2019թ. վերապատրաստված աշխատակիցների որոշ մասը մասնակցել է երկամսյա-եռամսյա դասընթացների: ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. ՖՀՄՈՒԿ հիմնադրամում կազմակերպված երկամսյա-եռամսյա դասընթացներին մասնակցել է Ընկերության 115 աշխատակից

2019թ. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ մասնակցած աշխատակիցների քանակներն ըստ դասընթացների տիպերի



5.3. Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ -2019

● Հիմք ընդունելով «Վեոլիա Գրուպի» Գլխավոր գործադիր տնօրեն Անտուան Ֆրերոյի՝ 07/03/2019 թվականի՝ ս.թ. 16-20-ը ընկած ժամանակահատվածում նախատեսվող «Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ 2019» ամենամյա հինգերորդ միջոցառումների անցկացման վերաբերյալ հանձնարարականը և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ գլխավոր տնօրենի Ժ/պ Մ.Շահինյանի 04.09.2019թ. թիվ 20 Լ հրամանը, ՈԱԱ Ծառայությունը կազմակերպեց և իրականացրեց «Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ -2019» միջոցառումը:

● Միջոցառման նպատակն էր բարձրացնել աշխատատեղում առողջության և անվտանգության (այսուհետ՝ ԱԱ) մասով աշխատողների շրջանում իրազեկվածության մակարդակը, շեշտադրել վերջինիս կարևորությունը, տեղեկացնել և խթանել աշխատատեղում ԱԱ կանխարգելման մշակույթի ձևավորմանը:

● Ծառայությունը ԱԱ Շաբաթ-2019 միջոցառման շրջանակներում Ընկերության ստորաբաժանումների պատասխանատուների հետ կազմակերպեց նաև Վեոլիա Գրուպի կողմից Անվտանգության վերաբերյալ նկարահանված «ՆԿԱՏԵԼ, ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՀՈԳԱԼ» սոցիալական ֆիլմի դիտումներ և քննարկումներ:





5.4. Համագործակցություն ՀՀ ԱԻ և ՊՆ նախարարությունների հետ

● Սեպտեմբերի 12-13-ին Ընկերության ՈԱԱ Ծառայության աշխատակիցները՝ «Արմավիր» շահագործման տեղամասի պետի և «Էջմիածին» շահագործման տեղամասի աշխատանքային խմբի ղեկավարի հետ մասկակցեցին ՀՀ Արմավիրի մարզպետարանում ՀՀ Արմավիրի մարզպետ, ուսուսնավարժության ղեկավար Համբարձում Մաթևոսյանի գլխավորությամբ կազմակերպված «Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով հրամանատարաշտաբային ուսուսնավարժությանը, որի օպերատիվ կազմակերպման համար հիմք է հանդիսացել սեպտեմբերի 10-ին Հայաստանի տարածքում, հատկապես՝ Գյումրիում ու Վանաձորում գրանցված երկրաշարժը:

● Ղեկավարվելով ՀՀ կառավարության 19 սեպտեմբերի 2019 թվականի «Ձորահավաքային նախապատրաստության ու զորահավաքի գործընթացում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների համաձայնեցված գործունեության կազմակերպման նպատակով ուսուսնավարժական հավաքներ և պարապմունքներ անցկացնելու մասին» որոշմամբ սեպտեմբերի 24-ից Ընկերության համապատասխան ստորաբաժանումները՝ իրենց ամրակցված թվով 30 ավտոտրանսպորտային միջոցներով, մասնակցեցին ռազմավարական զորավարժության ուսուսնավարժական հավաքներին և պարապմունքներին:

● Համաձայն ՀՀ Արմավիրի մարզպետի 06.06.2019 թվականի թիվ 44 որոշմամբ հաստատված ՀՀ Արմավիրի մարզի արտակարգ



իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանի 8.4.1 կետի պահանջների ընկերության ՈԱԱ Ծառայությունը «Արևելք» ՏՏ «Արմավիր» շահագործման տեղամասի վթարային խմբի հետ սեպտեմբերի 27-ին կազմակերպեց և իրականացրեց «ԱԻ հետևանքով քաղաք Արմավիր Սայաթ-Նովա փողոցը սնուցող ջրագծի վրա առաջացած վթարի դեպքում վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով հատուկ տակտիկական ուսուցնավարժություն:

5.5. Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների ապահովում

● Ելնելով Վեոլիա Գրուպի «Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների» պահանջներից ՀՀ կառավարության 2008թ. N 113-Ն որոշմամբ սահմանված «ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջների, դրա կիրառման կանոնների», ԳՕՍՏ Ռ 51256-2018 - «Ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցներ: Ճանապարհային գծանշում: Տեխնիկական պահանջներ: Դասակարգում:» ստանդարտի համաձայն կազմակերպվեցին և իրականացվեցին ընկերության Լոռի, Էջմիածին տեղամասերի և Ալեքսանդրապոլի վարչական շենքերի տարածքներում ավտոկայանատեղերի գծանշման և ճանապարհային նշանների կիրառման աշխատանքներ:

5.6. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացող միջոցառումների կիրառում

● Ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին Անվտանգության ստուգայցներ «Արևմուտք» տարածաշրջանային տնօրինության թվով 3 («Էջմիածին», «Լոռի», «Շիրակ») շահագործման տեղամասեր:

● Ընկերությունը, ելնելով Վեոլիա Գրուպի «Գազաեռակցման և գազաբոցային աշխատանքների անվտանգություն» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջներից, և առաջնորդվելով գլխավոր տնօրենի 30-ը սեպտեմբերի 2019 թվականի N29L հրամանով, շահագործման տեղամասերում կազմակերպեց և իրականացրեց համապատասխան աշխատակիցների հրահանգավորումն ըստ «Գազաեռակցման և գազակտրման աշխատանքներին, ինչպես նաև թթվածնի և ացետիլենի բալոնների, գեներատորի պահպանմանը, տեղափոխմանը և պահեստավորմանը ներկայացվող անվտանգության պահանջներ» հրահանգի:



● ՈԱԱ Ծառայության կողմից ուսուցասիրվել են ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՍ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:





«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am